

ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ

Հայաստանի Հանրապետության պետատոմհսկողության և Ուկրաինայի շրջակա բնական միջավայրի պահպանության ու միջուկային անվտանգության նախարարության միջև՝ միջուկային անվտանգության բնագավառում տեխնիկական համագործակցության և տեղեկության փոխանակման մասին

Հայաստանի Հանրապետության պետատոմհսկողությունը և Ուկրաինայի շրջակա բնական միջավայրի պահպանության ու միջուկային անվտանգության նախարարությունը, այսուհետ՝ Կողմեր, հանդիսանալով ատոմային էներգիայի անվտանգ օգտագործման բնագավառում իրենց լիազորությունների շրջանակներում պատասխանատվություն կրող կազմակերպություններ, հաշվի առնելով, որ միջուկային կարգավորման բնագավառում տեխնիկական համագործակցությունը և տեղեկության փոխանակումը համապատասխանում են Կողմերի շահերին,

համաձայնեցին ներքոհիշյալի մասին.

Հոդված 1

Կողմերը պայմանավորվում են, սույն Համաձայնագրին և իրենց ազգային օրենսդրությանը համաձայն, տեխնիկական համագործակցություն և տեղեկության փոխանակում իրականացնել ատոմային էներգիայի անվտանգ օգտագործման կարգավորման բնագավառում:

Հոդված 2

Սույն Համաձայնագրի 1-ին հոդվածում նշված համագործակցությունը ընդգրկում է հետևյալ ոլորտները.

- ա) միջուկային տեղակայանքների անվտանգություն՝ նրանց կենսական պարբերաշրջանի ընթացքում,
- բ) ճառագայթային պաշտպանության և ռադիոակտիվ թափոնների ու իոնացնող ճառագայթման աղբյուրների անվտանգություն,
- գ) միջուկային տեղակայանքների և շահագործող անձնակազմի լիցենզավորում,

դ) օրենսդրական և այլ նորմատիվ-իրավական ակտերի, անվտանգության չափանիշների մշակում, դրանց ներդրում և վերանայում,

ե) շահագործող կազմակերպությունների գործունեության մասին տեխնիկական հաշվետվությունների և միջուկային տեղակայանքների, ռադիոակտիվ թափոնների և իոնացնող ճառագայթման աղբյուրների հետ առնչվող օբյեկտների անվտանգության գնահատման նյութերի փոխանակում,

զ) այլ հարցեր:

Հոդված 3

Կողմերը իրավունք ունեն օգտագործել և ազատ տարածել փոխանակման արդյունքում ստացած ցանկացած տեղեկություն, բացառությամբ այն դեպքերի, երբ տեղեկատվություն ուղարկող Կողմը նախօրոք հայտնել է փոխանցվող տեղեկության օգտագործմանը և տարածմանը վերաբերող սահմանափակումների և պայմանների մասին:

Կողմերը պարտավորվում են համապատասխան միջոցներ ձեռնարկել մյուս Կողմից ստացած ծառայողական գաղտնիք պարունակող տեղեկությունների պաշտպանության ապահովման համար:

Կողմերից յուրաքանչյուրը սույն Համաձայնագրով մյուս Կողմից ստացած տեղեկությունն օգտագործելիս լիակատար պատասխանատվություն է կրում այն հետևանքների համար, որոնք կարող են առաջանալ ստացած տեղեկությունն օգտագործելիս, և պարտավորվում է չգործել ի վնաս մյուս Կողմի:

Հոդված 4

Կողմերից յուրաքանչյուրը կաջակցի մյուս Կողմին՝ հնարավորություններ ստեղծելով մյուս Կողմի ներկայացուցչի կամ ներկայացուցիչների կամ Կողմին ենթակա այլ կազմակերպության լիազոր-ներկայացուցիչների այցելությունների համար՝ ատոմային էներգիայի անվտանգ օգտագործման կարգավորման բնագավառում տեղեկության փոխանակման կամ ուսման նպատակով:

Այցելությունների կազմակերպման ժամանակ ճանապարհատրանսպորտային ծախսերը իր վրա է վերցնում ուղարկող Կողմը, իսկ բնակվելու, սննդի և տեղական տրանսպորտի ծախսերը՝ ընդունող Կողմը, բացառությամբ այն դեպքերի, երբ կա այլ պայմանավորվածություն:

Ուսման և երկարատև այցելությունների կազմակերպման դեպքում դրանց կազմակերպման և ֆինանսավորման պայմանները նույնպես հատուկ կքննարկվեն: Ֆինանսական հարցերը կլուծվեն Կողմերից յուրաքանչյուրի հնարավորությունների համաձայն:

Հոդված 5

Կողմերից յուրաքանչյուրը իր աշխատակիցների թվից նշանակում է համակարգող, որը պատասխանատու կլինի սույն Համաձայնագրի դրույթների կատարման համար: Նշանակված համակարգողների մասին Կողմերը միմյանց տեղյակ են պահում սույն Համաձայնագիրը ուժի մեջ մտնելուց հետո:

Մնացած դեպքերում, եթե սույն Համաձայնագրում դա հատուկ նշված չէ, բոլոր հարցումները և տեղեկությունները սույն Համաձայնագրի շրջանակներում փոխանցվում են համակարգողների միջոցով:

Սույն Համաձայնագրի կատարման նկատմամբ հսկողության ապահովման նպատակով Կողմերի հանդիպումները կազմակերպելու են Կողմերի համակարգողները:

Հոդված 6

Սույն Համաձայնագրի մեկնաբանման և կիրառման հետ կապված՝ առաջացող տարաձայնությունները կլուծվեն բարյացակամության մթնոլորտում՝ Կողմերի միջև երկկողմ քննարկումների կամ բանակցությունների միջոցով:

Հոդված 7

Սույն Համաձայնագրում Կողմերից յուրաքանչյուրի նախաձեռնությամբ կարող են կատարվել փոփոխություններ և լրացումներ, որոնք ձևակերպվում են առանձին արձանագրությամբ և կցվում են սույն Համաձայնագրին:

Փոփոխությունների և լրացումների մասին արձանագրությունն ուժի մեջ է մտնում սույն Համաձայնագրի 9-րդ հոդվածով նախատեսված կարգով:

Հոդված 8

Համագործակցության և տեղեկության փոխանակման ընթացքում օգտագործվող աշխատանքային լեզուն ռուսերենն է:

Հոդված 9

Սույն Համաձայնագիրն ուժի մեջ է մտնում այն օրվանից, երբ Կողմերը դիվանագիտական ուղիներով միմյանց ծանուցում են, որ կատարել են սույն Համաձայնագրի ուժի մեջ մտնելու համար իրենց օրենսդրությանը համապատասխան անհրաժեշտ պայմանները, գործում է հինգ տարվա ընթացքում և այդ ժամկետը լրանալուց հետո ինքնաբերաբար երկարաձգվում է ևս հինգ տարով: Հետագայում Համաձայնագրի գործողությունը կարող է երկարաձգվել Կողմերի համաձայնությամբ: Ցանկացած Կողմ կարող է դադարեցնել սույն Համաձայնագրի գործողությունը՝ մյուս Կողմին Համաձայնագրի գործողության դադարեցման ենթադրվող օրվանից երեք ամիս առաջ գրավոր ծանուցելով իր մտադրության մասին:

Կատարված է Կիև քաղաքում 1999 թվականի հուլիսի 20-ին, երկու օրինակով, յուրաքանչյուրը՝ հայերեն, ուկրաիներեն և ռուսերեն, ընդ որում բոլոր տեքստերը հավասարազոր են: Եթե կան տարաձայնություններ, Համաձայնագրի մեկնաբանումը կհիմնվի ռուսերեն տեքստի վրա:

Համաձայնագիրն ուժի մեջ է մտել 2000 թվականի ապրիլի 12-ից: